

*Համարում զետեղված են ակադեմիկոս
Էդուարդ Բագրատի Աղայանի
ծննդյան 100-ամյակի առթիվ ԵՊՀ հայ
բանասիրության ֆակուլտետում կայացած
գիտաժողովում կարդացված զեկուցումները*

ՅՆՉՈՒՅԹԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹԸ Է. ԱՂԱՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հնչույթի տեսության հարցերը լեզվաբանների միտքը զբաղեցրել են նախորդ գրեթե ողջ հարյուրամյակի ընթացքում, որն էլ խթանել է մի շարք հնչույթաբանական դպրոցների ու հոսանքների առաջացումը: Դրանց մեջ նշանավոր էին հատկապես գործառական (ֆունկցիոնալ) և բաշխական (դիստրիբուտիվ) հնչույթաբանական ուսմունքները, որոնք էլ, մի կողմից, ունեցել են ամենից շատ հետևորդները, մյուս կողմից՝ ամենից շատն են նոր ճյուղավորումների հիմք դարձել:

Հնչույթի տեսության հարցերը գրավել են նաև նախորդ դարի առանձին հայ լեզվաբանների ուշադրությունը, այդ թվում՝ ակադ. Է. Աղայանի, որը Գ. Ղափանցյանից հետո առաջինն էր, որ ոչ միայն անդրադարձավ հնչույթի տեսությանը, այլև փորձեց համաժամանակյա հնչույթաբանության սկզբունքներով քննել գրաբարի հնչույթային համակարգը՝ նրա ուսումնասիրությունը բարձրացնելով որակապես նոր մակարդակի¹:

Է. Աղայանի հնչույթաբանական հայացքները ձևավորվել են շուրջ քառասուն տարվա ընթացքում՝ հեղինակի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացից» (1947) մինչև «Լեզվաբանության հիմունքներ» (1987) բուհական դասագրքերի հրատարակության ու վերահրատարակության ճանապարհին: Այդ ընթացքում անվանի լեզվաբանի հնչույթաբանական հայացքների ձևավորումն ընթացել է ոչ այնքան եղած պատկերացումների մշակման ու հարստացման ճանապարհով, որքան որակական փոփոխությունների: Ինչպես առհասարակ Է. Աղայանի լեզվաբանական հայացքների, այնպես էլ, մասնավորապես, նրա հնչույթաբանական պատկերացումների համար հատկանշական է այն, որ նա կարողացել է տեսնել և գնահատել իր ժամանակի առաջադեմ մտքերն ու գաղափարները, բայց երբեք չի դարձել դրանց պարզ ընդօրինակողը: Երևույթներին քննական հայացքով նայելու նրա կարողությունը օգնել է ոչ միայն տեսնելու նույնիսկ ամենից հեղինակավոր տեսությունների խոցելի կողմերը, այլև հաճախ առաջարկելու նոր լուծումներ:

Պրոֆ. Աղայանի հնչույթաբանական պատկերացումների ամբողջական

¹ Տե՛ս Է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. I, գլ. Ա, Հնչունաբանություն, Եր., 1964:

քննությունը, հատկապես եթե ներառենք գրաբարի հնչույթաբանության վերաբերյալ նրա տեսակետները, հնարավոր չէ կատարել մեկ հոդվածի սահմաններում, ուստի մենք կսահմանափակվենք միայն հնչույթի տեսության շուրջ նրա տեսակետների զարգացման ու փոփոխության քննությամբ:

Յայ լեզվաբանության մեջ առաջինը Գ. Ղափանցյանն է ներմուծել հնչույթի հասկացությունը, բայց չի առաջարկել նոր տերմին, այլ գործածել է լեզվաբանության մեջ կիրառություն ունեցող *ֆոնեման*: Լինելով Բողոլեն դը Կուրտենեի աշակերտը Ս. Պետերբուրգում՝ նա ընդօրինակել է հնչույթի հոգեբանական բնորոշումը, որին Բողոլենը հանգել էր դեռևս 1899-ին և ավելի խորացրել պետերբուրգյան գործունեության շրջանում²:

Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» «կոթողային աշխատություն»³ համարելով հանդերձ՝ Աղայանը նրան չի հետևել նույնիսկ հնչույթի բնորոշման իր առաջին փորձում⁴:

Անվանի լեզվաբանի հնչույթաբանական հայացքների ձևավորման գործում վճռորոշ է եղել ծանոթությունը Ն. Ս. Տրուբեցկոյի «Հնչույթաբանության հիմունքներ» մեծարժեք աշխատությանը (գերմ. հրատ.՝ 1939-ին, ռուս. թարգմ.՝ 1960-ին): Այդ շրջանից սկսած՝ Է. Աղայանը, հիմք ընդունելով Ն. Տրուբեցկոյի ուսմունքի հիմնական դրույթները, վերանայում է իր հնչույթաբանական պատկերացումները, բայց, որ ավելի ուշագրավ է, նա քննական վերաբերմունք է դրսևորում այդ ուսմունքի նկատմամբ՝ առանձին դեպքերում մերժելով նրանում տեղ գտած որոշ տեսակետներ և առաջարկելով նորերը:

«Ընդհանուր լեզվաբանության դասընթացից» մինչև «Լեզվաբանության հիմունքներ» Է. Աղայանի հնչույթաբանական պատկերացումների կազմավորման շուրջ քառասունյա ճանապարհին ուրվագծվում է հնչույթի բնորոշման երեք հայեցակետային փուլ, որոնք որոշ պայմանականությամբ կարելի է անվանել՝ 1) **հաղորդակցական** կամ **հասարակական** (հմմտ. «Հնչույթ է լեզվական հանրության կողմից հասարակայնորեն գիտակցված և արժեքավորված յուրաքանչյուր հնչյունական հասկացություն(ը)»⁵). 2) **իմացաբանական-ֆիզիկական** (հմմտ. «Հնչույթը միևնույն էական (տարբերակիչ) հատկանիշներն ունեցող հնչյունների ընդհանուրն է և իբրև այդպիսին՝ լեզվի նյութական միավորը»⁶ (ընդգծումն իմն է - Վ.

² Յմտ. «... հնչյունն առանձին վերցրած այնչափ մեզ համար նշանակություն ունի, վորչափով նա կազմում է լեզվի հասարակական գիտակցության մեջ անհրաժեշտ և նշանակելի տարր և մեր հոգեկանության մեջ մի ամբողջություն, այսինքն՝ վորչափով մենք ունենք նրա ամբողջական պարտադիր պատկերացումը - հիշողությունը: *Յետևապես այդ հնչյունն իբրև «ֆոնեմա» յե ի հայտ գալիս մեր մեջ...*» (ընդգծումներն իմն են - Վ. Պ.) (Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. I, Յերևան, 1939, էջ 43):

³ Է. Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 194: - Յմտ. նաև՝ «...Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատությունը... մի լուրջ ներդրում է սովետական լեզվաբանության մեջ:... Ամբողջությամբ վերցրած, Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» ներկայացնում է իր ժամանակի սովետական լեզվաբանության ամենաբարձր մակարդակը» (Է. Բ. Աղայան, Յայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 217-218):

⁴ Տես Է. Բ. Աղայան, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., 1947, էջ 77:

⁵ Նույն տեղում:

⁶ Է. Բ. Աղայան, Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003, էջ 89-90: Քաղվածքը այս գրքում տեղ գտած «Յայերենի հնչույթային համակարգի պատմությունից» հոդվածից է, որն առաջին անգամ լույս է տեսել 1961 թ. «Պատմաբանասիրական հանդեսի» 2-րդ համարում: Հնչույթի՝ որպես լեզվական պլանի նյութական միավորի ըմբռնումը

Պ.). 3) **իմաստագատիչ-վերացական** (հմմտ. «...հնչույթը լեզվական կառուցվածքի վերացարկված միավոր է իմաստագատիչ հակադրությունների համակարգում»)⁷:

Եթե մինչև «Լեզվաբանության հիմունքները» է. Աղայանը (ինչպես և լեզվաբաններից շատերը) տարբերակել է երկու կարգի հնչաբանական միավոր՝ **հնչյուն**⁸ որպես կենդանի խոսքում արտասանվող նվազագույն նյութական բաղադրիչ, և **հնչույթ**⁹ որպես լեզվական պլանում «միևնույն էական հատկանիշներն ունեցող հնչյունների» ընդհանրական պատկերացում, ապա վերոհիշյալ գրքում նա առաջարկում է տարբերակել հնչաբանական միավորների երեք կարգ՝ ներմուծելով նաև **հնչուրդի**⁸ հասկացությունը, որով, ըստ էության, նրա հնչաբանական հայեցակարգը սկզբունքային փոփոխության է ենթարկվում: **Յնչուրդ** տերմինով նշանակվում է խոսքային պլանի միավորը (նախկին տերմինաբանությամբ **հնչյունը**) (հմմտ. «...հնչուրդը կենդանի խոսքում արտասանված յուրաքանչյուր հնչյունի իրական դրսևորումն է»⁹), հնչյուն տերմինով՝ հնչուրդների հոգեբանական պատկերացումը (հնչույթն ըստ Բոդուեն դը Կուրտենեի), որը է. Աղայանը համարում է լեզվական նյութական միավոր (հմմտ. «... հնչյունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հնչուրդների ընդհանուր ու էական հատկանիշներն արտացոլող պատկերացումը, որը միավորում է տվյալ հնչյունի բոլոր հնչուրդները»¹⁰), իսկ **հնչույթ** տերմինով՝ լեզվական կառուցվածքի նվազագույն վերացական բաղադրիչը, որն օժտված է միայն տարբերակիչ կամ էական (релевантныи) հատկանիշներով, ի տարբերություն լեզվական հնչյունի, որին բնորոշ են նաև լրացական կամ ոչ էական (иррелевантныи) հատկանիշներ: Ըստ էության, լեզվական հնչյունն այն միջանկյալ, անցումային օղակն է, որով կապ է ստեղծվում խոսքային (անհատական) հնչուրդի և լեզվական կառուցվածքի վերացարկված բաղադրիչի՝ հնչույթի միջև, որը, այս հայեցակարգի համաձայն, գիտական կոնստրուկտ է ու ոչ թե նյութական միավոր:

Թեև հնչյունի և հնչույթի առաջին տարբերակումները փոքր-ինչ ավելի վաղ են եղել, քան 1916 թ. Ֆ. դը Սոսյուրի կողմից հստակորեն կձևակերպվեց **լեզվի** և **խոսքի** սահմանազատման պահանջը, այնուամենայնիվ հնչույթաբանական հայեցակարգերի տրամաբանությունը տեսությունների զգալի մասի դեպքում ուղղակիորեն բխում է լեզվական և խոսքային պլանների տարբերակման տրամաբանությունից: Այդ մոտեցումն ընկած է նաև Ն. Ս. Տրուբեցկոյի հնչույթաբանական ուսմունքի հիմքում. նա ևս հնչյունը և հնչույթը սահմանազատում է որպես առաջինը՝ խոսքային, իսկ երկրորդը՝ լեզվական պլանի միավոր¹¹:

պահպանվում է 1960-ականներին պրոֆ. Աղայանի հրատարակած տարբեր գրքերում («Լեզվաբանության ներածություն», Եր., 1963, էջ 172-173, «Գրաբարի քերականություն. Յնչունաբանություն», Եր., 1964, էջ 64-65):

⁷ Երկրորդ և երրորդ փուլերի հիմնական առանձնահատկություններից է այն, որ երկրորդ փուլում է. Աղայանը հնչույթը համարում է **նյութական** միավոր (հմմտ. նաև. «Մենք, իբրև ելակետ, ընդունում ենք հնչույթի հենց նյութականությունը»), իսկ երրորդ փուլում, ինչպես արդեն տեսանք, այն բնորոշվում է իբրև **վերացական** միավոր:

⁸ Չասկանալի է՝ ինքն էլ առաջարկում է, մեր կարծիքով, «հնչուրդ» հաջողված տերմինը:

⁹ **Է. Բ. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, էջ 237:

¹⁰ Նույն տեղում,

¹¹ Թվում է՝ Ն. Ս. Տրուբեցկոյը տարբերակում է հնչաբանական նաև երրորդ տիպի

Հնչաբանական այն հայեցակարգերը, որոնք տարբերակում են լեզվական հնչյունը և խոսքային հնչյունը, տրամաբանական է, որ ելնեն լեզվի և խոսքի այլ ըմբռնումից, քան դա առկա է Ֆ. դը Սոսյուրի «Դասընթացում»: Հայտնի է, որ վերջինս, լեզուն (langue) և խոսքը (parole) համարելով լեզվախոսության (langage) երկու կողմերը, լեզվին վերագրել է միայն հասարակական, իսկ խոսքին՝ միայն անհատական բնույթ (հմմտ. «... լեզվախոսության ուսումնասիրությունը բաժանվում է երկու մասի. **նրանցից մեկի՝ հիմնականի առարկան է լեզուն, այսինքն՝ էությանը հասարակական և անհատից անկախ մի բան**, դա զուտ հոգեկան գիտություն է. **մյուսի՝ երկրորդայինի առարկան լեզվախոսության անհատական կողմն է, այսինքն՝ խոսքը**, ներառյալ հնչողությունը. այն հոգեֆիզիկական է»¹² (ընդգծումն իմն է - Վ. Պ.): Թե՛ լեզուն և թե՛ խոսքը համասեռ երեւոյթներ են, իսկ նրանց միասնությունը հանդիսացող լեզվախոսությունը տարասեռ երևույթ է:

Լեզվի և խոսքի ըմբռնման այսպիսի հայեցակարգից բխում է հնչական երկու տիպի միավորի՝ լեզվական հնչյունի (այսինքն՝ հնչույթի) և խոսքային հնչյունի (կամ հնչուրդի) տարբերակումը, ինչը և առկա է 20-րդ դարի կեսերի գրեթե բոլոր հնչույթաբանական տեսություններում, այդ թվում՝ Ն. Ս. Տրուբեցկոյի գործառական հնչույթաբանության մեջ: Հարցի բնույթը փոխվում է, երբ լեզուն դիտվում է որպես տարասեռ երևույթ՝ օժտված ինչպես հասարակական, այնպես էլ անհատական կողմերով¹³: Լեզվի միայն

միավորը՝ «լեզվական հնչյունը» (հմմտ. «Բոլոր, ինչպես հնչույթաբանորեն էական, այնպես էլ ոչ էական հատկանիշների ամբողջությունը, որոնք դրսևորվում են հնչյունական հոսընթացի այն կետում, որտեղ իրացվում է հնչույթը, մենք անվանում ենք **լեզվի հնչյուն (և համապատասխանաբար՝ խոսքի հնչյուն)**» - ընդգծումն իմն է- Վ. Պ.), բայց մեջբերված հատվածի ընդգծված մասից երևում է, որ այդ գաղափարը նրա մոտ հստակ չէ, այն երկիմաստ է հնչում: Ըստ ամենայնի՝ նշանավոր հնչույթաբանը դարձյալ նկատի ունի **խոսքային հնչյունը**: Ավելի շուտ հենց դրա մասին է վկայում անմիջականորեն հաջորդող պարբերությունը՝ գերմաներենից բերված օրինակներով (տես նույն տեղում, էջ 44), քան **լեզվական հնչյունի՝** որպես խոսքային հնչյունից տարբեր միավորի:

¹² Фердинанд де Соссюр. Труды по языкознанию. М., 1977, с. 57.

¹³ Արդարության դեմ չմեղանչելու համար պիտի խոստովանել, որ «Դասընթացի» հեղինակին խորթ չէ **անհատի գիտակցության մեջ լեզվական համակարգի առկայության ըմբռնումը**, այն վերապահությամբ, որ անհատական լեզվական համակարգը համարժեք չէ հասարակական լեզվական համակարգին. այն հասարակական լեզվահամակարգի մանրակերտն է (հմմտ. «Լեզուն խոսքի պրակտիկայում միևնույն հասարակական կոլեկտիվին պատկանողների մեջ տպավորված գանձ է. դա յուրաքանչյուրի, ավելի ճիշտ՝ անհատների մի ամբողջ խմբի ուղեղներում գործուն կերպով առկա քերականական համակարգ է, քանզի լեզուն ամբողջությամբ գոյություն չունի նրանցից ոչ մեկի մեջ, այն լիարժեքորեն գոյություն ունի միայն կոլեկտիվի մեջ» (Фердинанд де Соссюр, նշվ. աշխ., էջ 52): Այս միանգամայն ճիշտ դիտարկումը, սակայն, «Դասընթացում» չի հասնում տրամաբանական հանգուցալուծման, որովհետև նրա հեղինակը, այնուամենայնիվ, մնում է լեզվի և խոսքի՝ որպես հասարակականի և անհատականի հակադրության տեսակետին. հմմտ. «Բաժանելով լեզուն և խոսքը՝ մենք դրանով իսկ բաժանում ենք. 1) հասարակականը անհատականից. 2) էականը երկրորդականից և շատ թե քիչ պատահականից» (նույն տեղում):

Լեզվի՝ որպես տարասեռ՝ միաժամանակ հասարակական և անհատական երևույթի ըմբռնումը որոշակի ձևակերպում է ստանում է. Կոսերիուի և Գ. Ջահուկյանի աշխատություններում: Հմմտ. «Լեզուն գոյություն ունի միայն անհատների խոսքում, խոսքը միշտ ենթադրում է ինչ-որ որոշակի լեզու» (Косериу Э. Синхрония, диахрония и история // "Новое в лингвистике", вып. III, М., 1963, с. 157) և «... խոսքը՝ որպես անհատական երևույթ, կոլեկտիվի լեզվին հակադրվում է անհատի լեզվի միջոցով: Այդ դեպքում մենք

այսպիսի ըմբռնման դեպքում է տրամաբանական թվում երեք տիպի հնչական միավորի՝ *խոսքային հնչյունի*, *լեզվական հնչյունի* և *հնչույթի* տարբերակումը. վերջինը՝ որպես լեզվական կառուցվածքի վերացարկված բաղադրիչ, այսինքն՝ գիտական կոնստրուկտ:

Է. Աղայանի կողմից ևս երեք տիպի հնչական միավորների տարբերակման գաղափարը, ըստ էության, հիմնված է լեզվախոսքային հարաբերակցության եռակողմ հակադրության վրա, այն տարբերությամբ, սակայն, որ անհատական լեզվին նրա հայեցակարգում փոխարինում է *հասարակական խոսքը* (հմմտ. «...անհատի մեջ կազմվող ներքին խոսքն էլ իր հիմքով հասարակական է»¹⁴): Լեզվախոսքային հարաբերակցության եռակողմ հակադրությունը Աղայանի հայեցակարգում ակնհայտ է դառնում հատկապես նախորդ հրատարակությունների համապատասխան թեմաների հետ զուգադրելու դեպքում (հմմտ., օր., «Լեզվաբանության ներածություն», 1963, էջ 67-71):

Իհարկե, հնչաբանական մակարդակում երեք կարգի միավոր տարբերակել են նաև ուրիշները, բայց նույնական չեն այդ միավորների բնութագրման հայեցակարգային հիմքերը: Այսպես, մոսկովյան հնչույթաբանական դպրոցի (ՄՅԴ) հիմնադիր ներկայացուցիչներից Պ. Ս. Կուզնեցովը ևս ուշ շրջանի իր հոդվածներից մեկում գրում է խոսքային հնչյունի, լեզվական հնչյունի և հնչույթի տարբերակման անհրաժեշտության մասին, որոնցից միայն խոսքի հնչյունը բնութագրային նույնություն ունի պրոֆ. Աղայանի կողմից տարբերակված խոսքային բաղադրիչի՝ հնչուրդի հետ: Մյուս միավորների դեպքում պատկերը փոքր-ինչ այլ է: Եթե է. Աղայանի հնչաբանական հայեցակարգում լեզվի հնչյունն ունի հոգեբանական բնութագիր և որպես այդպիսին (ինչպես արդեն նշվել է) համարվում է Բողունի հնչույթին, ապա Պ. Կուզնեցովի հայեցակարգում լեզվի հնչյունն ունի դասային բնութագիր. այդպիսին է «խոսքի հնչյունների՝ արտաբերական-ձայնաբանական առումով մեկը մյուսին մասնակիորեն մոտ, մասնակիորեն նույնական բազմությունը, որոնք հանդիպում են ամենատարբեր խոսքային հոսքերում, ամենատարբեր իմաստակիր միավորների (բառերի, ձևույթների) կազմում»¹⁵: Պ. Կուզնեցովը նշում է լեզվի հնչյունի ընդգրկման տիրույթների մեջ մտնող խոսքային հնչյունները որոշելու երեք միջոց՝ 1) տվյալ լեզվով խոսողների զգացողությունը, 2) լեզվաբանական առումով նուրբ լսողությամբ լեզվաբան-դիտարկողի զգացողությունը, 3) հնչյունաբանական փորձառական սարքավորումները¹⁶:

ունենք, մի կողմից, կոլեկտիվի լեզվի և անհատի լեզվի, մյուսից՝ անհատի լեզվի և նրա խոսքային իրացումների՝ որպես հնարավորության և իրականության հակադրություն» (Джаукян Г. Б. Универсальная теория языка. М., 1999, с. 12-13):

¹⁴ Է. Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 114:

¹⁵ Кузнецов П. С. Об основных положениях фонологии // Реформатский А. А. Из истории отечественной фонологии. М., 1970, с. 474.

¹⁶ Հաղորդակցական-ընկալողական առումով նշված երեք միջոցների և հատկապես առաջին երկուսի միջև էական տարբերություն չկա, քանզի, օրինակ, **ազատ**, **արագ**, **անգամ** բառերի կազմում արտաբերվող [ա]-երի նույնականացման համար (այսինքն՝ որ դրանք վերաբերում են միևնույն հնչյունական տիպին) ոչ անհրաժեշտ է լեզվաբան լինել և ոչ էլ հնչյունաբանական փորձառական քննություն իրականացնել. բավարար է հայոց լեզվի իմացությունը, այն է՝ լեզվական պրակտիկան: Այդ պրակտիկան յուրաքանչյուր հայախոսի ավանդաբար հուշում է, որ հնչաշղթայում **ա**-երի ձեռք բե-

Միանգամայն տարբեր են երկու լեզվաբանների պատկերացումները հնչույթի մասին: Այս հարցում Պ. Կուզնեցովը ՄՅԴ-ի լիարժեք ներկայացուցիչ է: Նա ևս ունի հնչույթի գործառական ըմբռնում. վերջինի տարբերակումը պայմանավորում է ձևույթի կազմում նրա տեղով, ավելի ստույգ՝ ուժեղ դիրքում նրա դրսևորած հնչաորակով: Այս չափորոշիչի կիրառումը առանձնահատուկ նշանակություն ունի շարժական շեշտ ունեցող լեզուների համար (օր.՝ ժամ. ռուսերենի), որոնցում նաև շեշտի տեղաշարժով է պայմանավորվում հնչույթային դիրքի տեսակը՝ ուժեղ կամ թույլ: Այսպես, ըստ ՄՅԴ-ի սկզբունքի՝ ռուս. вода [вoдa՝], водной [вѣднo՛յ] և воды [вo՛ды] բառաձևերում արտաբերվող [a] (գրային o), [ѣ] և [o] հնչյունները վերաբերում են <o> հնչույթին, որովհետև ուժեղ (շեշտված) դիրքում այն արտասանվում է [o], сад [сaт] բառում և садовод [сəдaвo՛т] բառի сад-բաղադրիչում արտաբերվող [a] և [ə] ձայնավորները վերաբերում են <a> հնչույթին, իսկ վերջին բաղաձայն հնչյունները ([т], [д])՝ <д> հնչույթին:

Չնայած որ Պ. Կուզնեցովը հնչույթը սահմանում է որպես «խոսքի հնչյունների որոշակի դաս»¹⁷, տերմինային բնորոշման առումով յուրօրինակ կամուրջ նետելով ՄՅԴ-ի և ամերիկյան դեսկրիպտիվ հնչույթաբանության միջև, այնուամենայնիվ հնչույթաբանական վերլուծության առումով նա գործառական սկզբունքի կրող է:

Ինչպես արդեն տեսել ենք, պրոֆ. Աղայանը հնչույթի տարբերակումը չի պայմանավորում ձևույթի մեջ նրա տեղով. հնչույթային ուժեղ և թույլ դիրքերի գաղափարը նա կիրառում է ըստ Ն. Ս. Տրուբեցկոյի ըմբռնման: Մյուս կողմից, ՄՅԴ-ի հայեցակարգում հնչույթը վերացարկված միավոր, այսինքն՝ կոնստրուկտ չէ, որովհետև նույնանում է իր կիրառական տարբերակներից՝ խոսքային հնչյուններից, որևէ մեկին (այն այդպիսին է նաև ԼՅԴ-ի հնչույթաբանական հայեցակարգում. հմմտ.՝ հնչույթի հիմնական և ոչ հիմնական նրբերանգների ըմբռնումն ըստ Լ. Վ. Շչերբայի), իսկ Է. Աղայանի հայեցակարգում, ընդհակառակը, հնչույթը վերացարկված միավոր է, այն խոսքային հնչույթների ընդհանուր պատկերացումն է հաղորդակցվողների գիտակցության մեջ (հմմտ. «...հնչույթը վերացարկված ու վերացական միավոր է...»¹⁸): Հնչույթը վերացարկված միավոր էր համարում նաև Տրուբեցկոյը (հմմտ. «Եվ որովհետև յուրաքանչյուր հնչույթ անպայմանորեն հնչույթաբանական հակադրության անդամ է, ապա նա համընկնում է ոչ թե որոշակի հնչյունին, այլ միայն նրա հնչույթաբանորեն էական

րած սուլական՝ (գ-ի ազդեցությամբ), ատամնային (տ-ի ազդեցությամբ) կամ ռնգային (ն-ի ազդեցությամբ) երանգները չեն փոխում դրանց հնչյունական տիպը (իմա՝ դրանց չեն դարձնում այլ հնչույթ): Այլապես, օրինակ, **ագատ** և **արատ** բառերում կունենանք ոչ թե մեկ հնչույթային հակադրություն՝ <q>/<r>, այլ՝ երկու. նաև սուլականացած <a>-ի (ագատ) և թրթռային երանգով <a>-ի (արատ): Իսկ իրականում այդպես չէ:

Հակառակ դեպքում հնարավոր չէ պատկերացնել միևնույն լեզվակիր հանրության անդամների առօրյա հաղորդակցումը, որովհետև նրանց ճնշող մասը ո՛չ լեզվաբանական հատուկ գիտելիքներ ունի, ո՛չ էլ պատկերացում ունի փորձառական հետազոտությունների մասին: Այդպիսով հարցը դարձյալ հանգում է իրողության հասարակական և անհատական ընկալմանը, այլ կերպ՝ լեզվական կանոնի գիտակցմանը, որի հիմքը սովորույթն է և լեզվական պրակտիկան:

¹⁷ Кузнецов П. С., նշվ. աշխ., էջ 475:

¹⁸ Է. Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 245:

հատկանիշներին»¹⁹): Իսկ հնչույթաբանական (նաև հնչյունաբանական) հատկանիշներն ինքնուրույնաբար գոյություն չունեն, նրանք գոյություն ունեն միայն հնչույթային (հնչյունական) միասնության մեջ: Յետևաբար, հնչույթաբանական հատկանիշներին (թեկուզ նրանց որոշակի միասնությանը) համընկնող միավորը նյութական չէ, վերացարկուն է նյութականությունից և ավելի շուտ մետալեզվական միավոր է, քան բուն լեզվական:

Է. Աղայանի տարբերակած հնչաբանական միավորների եռատիպ համակարգի հետ զգալի ընդհանրություն ունի Լ. Վ. Շերբայի աշակերտ և նրա սկզբունքների հմուտ զարգացնող Լ. Ռ. Ջինդերի ներկայացրած հնչաբանական միավորների համակարգը: Նա տարբերակում է **հնչակը** (фон)՝ որպես «առանձնակի արտասանական ակտի արդյունք», որը տարբեր է ինչպես անհատից անհատ, այնպես էլ «արտասանությունից արտասանություն» (հմմտ. «...հնչուրդը կենդանի խոսքում արտասանված յուրաքանչյուր հնչյունի իրական դրսևորումն է», «...միևնույն հնչյունի հնչուրդները անվերջորեն բազմաթիվ են ու բազմազան»²⁰, «...հնչուրդը մասնավորն է, հնչյունի իրական դրսևորումը...»²¹), **այլահնչակը** (аплофон)՝ որպես հնչույթի դիրքային տարբերակ, որն իրացվում է հնչակի միջոցով, **հնչույթը** (фонема)՝ որպես այլահնչակների ընդհանուր պատկերացումը հաղորդակցվողների գիտակցության մեջ: Եթե հնչակը խոսքային նյութական միավոր է, ապա այլահնչակը և հնչույթը լեզվական միավորներ են²²: Այսպես, ռուս. **дом** «տուն» բառի [о] ձայնավորը յուրաքանչյուր առանձին (անհատական) արտասանության դեպքում ունենում է մի նոր երանգ, օր.՝ բաց կամ փակ, լայն կամ նեղ, երկարացված կամ կարճ ևն, որը անհատական բնույթ ունի: Այդ երանգներից որևէ մեկն ունեցող [о]-ն, ըստ Ջինդերի, հնչակ է՝ <о> հնչույթի՝ կենդանի խոսքում արտաբերվող առանձնակի արտասանական ակտը: **Дом, ворота, сон, молод** բառերում արտաբերվող [о]-երը այլահնչակներ են կամ «համակցային տարբերակներ», որովհետև նրանց արտասանական յուրահատկությունները (լրացուցիչ շրթնայնացում, թրթռային և ատամնային երանգներ, ռնգայնացում ևն) պայմանավորված են հնչաշղթայում կրած ազդեցությամբ, որի դեպքում էական չէ անհատական խոսքային ակտի գործոնը:

Ջինդերի եռաբաղադրիչ հնչաբանական հայեցակարգը ևս չի նույնանում Է. Աղայանի հայեցակարգին: Դրանցում նույնական են միայն խոսքային միավորները՝ հնչակն ըստ Լ. Ջինդերի և հնչուրդն ըստ Է. Աղայանի: Ի տարբերություն Աղայանի հնչյունի, Ջինդերի այլահնչակը, որ առաջինի համարժեքն է իբրև միավոր, հոգեբանական բնութագիր չունի: Նույնպիսի տարբերությամբ են հատկանշվում նաև երկու հայեցակարգերի հնչույթները: Ջինդերի հնչույթը չի բնորոշվում իբրև լեզվական կառուցվածքի վերացարկված միավոր. այն պարզապես հնչույթատարբերակիչ հատկանիշներից բաղկացած լեզվական միավոր է: Ավելին, հաշվի առնելով Լ. Ջինդերի հնչույթաբանական «դավանանքը» նրա պատկերացրած հնչույթն ավելի շուտ նյութական բնույթ ունի, քան վերացական:

¹⁹ Трубенкой Н. С. Основы фонологии. М., 2000, с. 43.

²⁰ Է. Ք. Աղայան, նշվ. աշխ., էջ 237:

²¹ Նույն տեղում, էջ 239:

²² Տե՛ս Зиндер Л. Р. Общая фонетика. М., 1979, էջ 47-48:

Յնչույթի գործառական բնորոշումն ընդունելով որպես «լեզվի հնչու-
նային համակարգի վերլուծության և ուսումնասիրության տեսակետից...
միակ ճիշտ մոտեցում»՝ «ինացաբանական տեսակետից», սակայն, Է. Ա-
ղայանն այդ սահմանումը բավարար չի համարում: Վերջինիս կարծիքով
չնայած որ ձևայինների և բառերի կազմում հնչույթը, որպես կանոն, իրա-
կանացում է իմաստազատիչ դեր, հնչույթային էության համար, սակայն,
գլխավորը իմաստաբաղադրիչ գործառույթն է, իսկ իմաստազատիչը նրա-
նից ածանցյալ է: Իմաստազատիչ գործառույթի համեմատությամբ իմաս-
տաբաղադրիչ գործառույթն առաջնային համարելը սոսկ ձևակերպման
հարց չէ, այլ սկզբունքային, որը, ըստ Է. Աղայանի, ակնհայտ է հատկապես
համանունության դեպքում: Յամաձայն հնչույթի իմաստազատիչ բնու-
թագրի՝ իմաստի տարբերությունը ենթադրում է ձևի գոնե նվազագույն
տարբերություն (հմմտ. հյ. բար «պտուղ» // պար, սուր // գուր, դուր («աշ-
խատանքային գործիք») // տուր («տալ» բայի հրամ. եղ. ձևը) // թուր (զի-
նատեսակը), ռու. том «հատոր» // дом «տուն», тень «ստվեր» // день
«օր» ևն): Այս սկզբունքը խախտվում է համանուն ձևերի դեպքում (հմմտ.
հյ. փող «պարանոց» // փող «դրամ» // փող «երաժշտական գործիք», այր
«տղամարդ» // այր «քարանձավ», հոտ «բույր» // հոտ «ոչխարների
խումբ», ռու. пол «հատակ» // пол «սեռ» (мужской пол «արական սեռ»),
предложение «նախադասություն» // предложение «առաջարկություն»,
рядом «մոտ, կողքին» // рядом (ряд «շարք» բառի եզ. թ. գործ. հ.), անգլ.
busy [ˈbɪzi] «զբաղված, ջանասեր» // busy [ˈbɪzi] «խուզարկու», right [raɪt]
«աջ» // right «ճիշտ, ուղիղ», second [sekənd] «վայրկյան, ակնթարթ» //
second [sekənd] «օգնական, հաջորդն ըստ աստիճանի», watch [wɒtʃ]
«ժամացույց (գրպանի, թևի)» // watch [wɒtʃ] «զգոնություն, ուշադրու-
թյուն», հյ. -ում (ածանց.՝ որոշ-ում, լուծ-ում) // -ում (վերջավորություն՝
գրք-ում, այգ- ում), -ի (հոլով. վերջ. քար-ի) // -ի (ըղծ. ապառնիի ցուցչ-
խոս-ի) // -ի (ժխտական դերբայի վերջ. չգր-ի) // -ի (ածանց. հայել-ի, ածել-
ի) ևն, ևն): Է. Աղայանի կարծիքով հնչույթի՝ որպես իմաստատարբերակիչ
միավորի և համանունների ձևային անտարբերակելիության միջև հակա-
սությունը վերանում է, երբ հնչույթի բնութագրական հատկանիշ է համար-
վում իմաստաբաղադրիչ գործառույթը, իսկ իմաստատարբերակելիությու-
նը՝ նրանից ածանցյալ: Այսինքն, ձևային և բառի կազմում հնչույթն իրա-
կանացում է ոչ միայն իմաստի տարբերակման, այլև (և առաջին հերթին)
իմաստի նույնականացման գործառույթ: Այսպես, հյ. վիպել և վիպական,
վիպասան բառերի կազմում առկա է միևնույն վիպ- (<վեպ-/<վեպ-) ձևույ-
թը, չնայած այն հանգամանքին, որ այդ բառերում, հնչաշղթայով պայմա-
նավորված, արտասանվում են տարբեր [պ]-եր (առաջինում՝ [ե]-ի, մյուս-
ներում՝ [ա]-ի արտաբերական երանգներով հարստացած), ռու. ко-
за//козу, слуга//слуг զույգերից առաջինում կա [з]/[з°], երկրորդում՝
[г]/[к] հնչյունական հերթագայությունը, բայց նրանց հիմքերը ([коз-
]/[коз°-], [слуг-]/[слук-]) ունեն հնչույթային նույնականություն, որի պատ-
ճառով էլ դրանք միևնույն բառի տարբեր ձևերն են և ոչ թե տարբեր բառեր:

Ուշագրավ է, որ, նկատելով հնչույթային բնութագրի համար այդ
կարևոր չափանիշը, պրոֆ. Աղայանն այն չի ներառել հնչույթի սահման-

ման մեջ (հմմտ. «... հնչույթը լեզվական կառուցվածքի վերացարկված միավոր է իմաստագատիչ հակադրությունների համակարգում»²³):

4) Ն. Ս. Տրուբեցկոյի կողմից տարբերակված հնչույթային երեք հակադրություններից՝ **մասնական** (привативный) (ըստ Է. Աղայանի՝ **լծորդական**), **աստիճանական** (градусальный) և **համազորային** (эквивалентный)²⁴, Է. Աղայանը «վիճելի» է համարում վերջինը:

Այս առումով պիտի նկատել, որ, ընդհանրապես բարձր գնահատելով Տրուբեցկոյի «Յնչույթաբանության հիմունքները», ուրիշները ևս նրանում մատնանշել են ոչ ընդունելի, սուբյեկտիվ դրույթներ, նույնիսկ՝ հայեցակարգային հակասություններ²⁵: Վերջին կարգի է համարվում, օրինակ, այն, որ նա «պնդել է հնչյունաբանությունը և հնչույթաբանությունը խստորեն տարանջատելու» միտքը, «չնայած որ նրա հնչույթաբանական կառուցումների հիմքում ընկած է հենց հնչյունական խոսքը»²⁶:

Ն. Ս. Տրուբեցկոյը համազոր է անվանում «այնպիսի հակադրությունները, որոնց երկու անդամներն էլ տրամաբանորեն հավասարազոր են, այսինքն՝ ոչ որևէ հատկանիշի երկու աստիճաններն են, ոչ էլ՝ հատկանիշի հաստատումը կամ ժխտումը»²⁷:

Յնչույթային հակադրության տեսակի ճշտումը, ըստ Տրուբեցկոյի, կախված է՝ 1) «մասամբ կառուցվածքից (իմա՝ լեզվի - Վ. Պ.), մասամբ էլ՝ հնչույթների համակարգի գործառնությունից», 2) այն տեսանկյունից, որով դիտարկվում է տվյալ հակադրությունը: Այսպես, t-d հակադրությունը մասնական է, եթե որպես տարբերակիչ հատկանիշ ուշադրություն է դարձվում «ձայնի մասնակցությանը կամ լեզվի մկանունքի լարվածությանը», և անտեսվում են մյուս հատկանիշները: Նույն հակադրությունը աստիճանական կարող է համարվել այնպիսի լեզուներում, որոնցում տարբերակվում է ձայնի և աղմուկի հարաբերակցության առնվազն երեք աստիճան, ինչպես՝ հայերենում՝ դ-տ-թ /d-t-th/, ուր թ/th/-ն դ/d/-ի համեմատությամբ հատկանշվում է խլության ավելի բարձր աստիճանով, քան տ/t/-ի համեմատությամբ կամ՝ տ/t/-ն դ/d/-ի համեմատությամբ (հմմտ. սանսկրիտում dh-d-t հակադրությունը), բայց, օրինակ, ռուսերենում կամ ֆրանսերենում t-d /t-d/ հակադրությունը չի կարող աստիճանական համարվել, որովհետև այդ լեզուներում ձայնեղության/խլության հատկանիշով կա միայն երկու հակադրություն: Ինչպես մասնական, այնպես էլ աստիճանական հակադրության համար ընդհանուր է այն, որ, կախված հակադրության դիտանկյունից, հակադրություն ձևավորող հատկանիշներից մեկը կլինի նշույթավորված, իսկ մյուսը՝ ոչ: Օր., ըստ ձայնեղության հատկանիշի՝ t-d հակադրության մեջ նշույթավորված կլինի d-ն, իսկ ըստ խլության հատկանիշի՝ t-ն: Սա-

²³ Այդ առումով ավելի ամբողջական է Ա. Ռեֆորմատսկու սահմանումը. «Յնչույթները լեզվի հնչյունական կառուցի նվազագույն միավորներ են, որոնք ծառայում են լեզվի իմաստակիր միավորների ձևավորմանը և տարբերակմանը» (Реформатский А. А. Введение в языковедение. М., 1967, с. 211): Այս սահմանումը գրեթե կրկնում է Ս. Վ. Պանովը (տես Ս. Պանով М. В. Современный русский язык. М., 1979, էջ 94):

²⁴ Է. Աղայանը **էկվիպոլենտ** հակադրության համար գործածում է **հոմանիշ** տերմինը:

²⁵ Տես Ռեформатский А. А. Н. С. Трубецкой и его «Основы фонологии» // Трубецкой Н. С., նշվ. աշխ., էջ 322-341:

²⁶ «Общее языковедение» (под общей ред. А. Е. Супруна). Минск, 1983, с. 294-295.

²⁷ Трубецкой Н. С., նշվ. աշխ., էջ 80:

կայն կան հնչույթային հակադրություններ (իսկ դրանք «ամենահաճախակի հակադրություններն են ցանկացած լեզվում»²⁸), որոնցում հակադրության երկու անդամներն էլ «նշույթավորված են», բայց նրանք ինքնուրույն են և տարբեր են. հմմտ. տ-պ /t-p/ հակադրությունը հայերենի **տար** (ըղծ. անց., եզ. ք., 3-րդ դ.) - **պար** «պարելը» կամ պ-կ /p-k/-ն՝ **պար-կար** (կամ պակասավոր բայի անց. ժ., եզ. ք., 3-րդ դ.) զույգերում, որոնցից առաջինում հնչույթային հակադրությունը տեղի է ունենում ատամնային-շրթնային, իսկ երկրորդում՝ շրթնային-հետնալեզվային հատկանիշների հակադրությամբ (մյուս հատկանիշներն ընդհանուր են բոլոր հնչույթների համար. պարզ խուլ են և պայթական):

Մասնական և **աստիճանական** հակադրություններից **համազորայինի** տարբերությունը հանգում է նրան, որ վերջինի դեպքում «ըստ հնչույթների համակարգի գործառնության պայմանների՝ անհատկանիշության (իմա՝ չնշույթավորվածության - Վ. Պ.) հասկացությունը կիրառելի»²⁹ չէ ոչ t-ի, ոչ էլ d-ի նկատմամբ:

Իհարկե, ճիշտ չի լինի ասել, որ համազորայինի՝ որպես հնչույթային հակադրության տեսակի տարբերակման համար առհասարակ հիմքեր չկան (այդ հիմքը հակադրության երկու կողմերի նշույթավորվածությունն է), բայց ակնհայտ է, որ, ի տարբերություն հակադրության մյուս տեսակների առանձնացման համար բավականին որոշակի հիմքերի, համազորայինի տարբերակման հիմքերը թույլ են: Թերևս ավելի համոզիչ կլիներ համազորային և մասնական հակադրությունները միավորել իբրև մեկ հակադրության տարբերակներ, որովհետև սկզբունքային առումով դրանց միջև տարբերությունը մեծ չէ, ի տարբերություն աստիճանականի, որի առանձնացման սկզբունքն այլ է:

Ուշագրավ է, որ հնչույթային հակադրությունների նշված երեք տեսակների (և ոչ միայն **համազորային** համարվածի) առանձնացման առումով վերապահումներ են արտահայտել նաև ուրիշները: Այսպես, Ա. Ա. Ռեֆորմատսկին վիճելի է համարում հարցերի ավելի լայն շրջանակ. «Նրա դատողություններում այդ առումով շատ բան է կասկածներ առաջացնում. Ինչո՞ւ պիտի հակադրությունների դասակարգումը դիտարկել այդքան տարբեր prinzipa divizionisi-ի տեսանկյունից: Ինչո՞ւ «մաքուր տրամաբանական հարաբերությունները առկա չեն նախորդ դասակարգումներում: Ինչո՞ւ հակադրությունների ստորև հաջորդող կարգերը «նշանակություն չունեն հնչույթային կազմի զուտ արտաքին կառուցվածքի» համար: Եվ ի՞նչ է «հնչույթային կազմի զուտ արտաքին կառուցվածքը»³⁰: «Ընդհանուր լեզվաբանության» հեղինակներն այդ առումով ավելի հեռուն են գնում: Նրանք հակված են հակադրությունների բոլոր երեք տեսակներն էլ վերագրելու «մետալեզվին» (վերջին հաշվով՝ կոնկրետ լեզվաբանական տեսությանը, այն է՝ հեղինակային մեկնությանը), քան թե բուն լեզվին³¹: Իսկ Ն. Ս. Տրուբեցկոյը կարծես կանխագագեղ է նմանօրինակ ընկալումների վտանգը. «Չպետք է, սակայն, մտածել, որ **այդպիսի բնորոշումը**

²⁸ Տե՛ս Трубецкой Н. С., նշվ. աշխ.:

²⁹ Նշվ. աշխ., էջ 82:

³⁰ Реформатский А. А. Н. С. Трубецкой и его «Основы фонологии» // նշվ. աշխ., с. 327:

³¹ Տե՛ս «Общее языкознание», էջ 294:

(ընդգծումն իմն է. իմա՝ հնչույթաբանական հակադրությունների այս կամ այն տեսակի - Վ. Պ.) զուտ սուբյեկտիվ է և կամայական»³²:

Թեպետև է. Աղայանը, ինչպես տեսանք, հնչույթի տեսությունը և հնչույթաբանական վերլուծությունը ներկայացնում է ըստ Տրուբեցկոյի ուսմունքի, այնուամենայնիվ դեռևս 1960-ականների սկզբին մշակում է նաև հնչույթաբանական բաշխական վերլուծության նոր մոդել, որտեղ *բաշխման* և *լրացուցիչ բաշխման* հասկացությունները փոխարինում է *ոլորտի*, *գերոլորտի*, *կիսոլորտի*, *մեծոլորտի* և *մանրոլորտի* հասկացություններով՝ այդպիսով, ըստ ամենայնի, առաջարկելով հնչույթի և նրա խոսքային տարատեսակների բաշխվածության սպառիչ նկարագրման եղանակ: Այս խնդրի քննությունը, սակայն, մեր նպատակից դուրս է, որքանով այն վերաբերում է հնչույթաբանական վերլուծությանը և ոչ թե բուն հնչույթի տեսությանը:

Չնայած որ նախորդ դարի ընթացքում հնչույթի հասկացությունը մնայուն տեղ է ունեցել հայ լեզվաբանության մեջ, պիտի ընդունել, սակայն, որ, առանձին բացառություններով³³, դրանք հայտնի տեսությունների տեղայնացումներ են: Պրոֆ. Աղայանն առաջինն էր, որ ոչ միայն հայերենի հնչյունական համակարգի նկատմամբ հետևողականորեն կիրառեց ամենից հաջողված հնչույթաբանական տեսություններից մեկը՝ Ն. Ս. Տրուբեցկոյի գործառական ուսմունքը, այլև այն հարստացրեց նոր գաղափարներով: Հնչույթաբանական հարցերի նկատմամբ դրսևորած իր սկեռուն ուշադրությամբ նա խթանեց հայ լեզվաբանական մտքի աճող հետաքրքրությունը դեպի հնչույթի ուսմունքը: Ավելին, գրաբարի հնչույթային համակարգին նվիրված իր խորահմուտ քննությամբ³⁴ **է. Բ. Աղայանը, ըստ էության, եղավ հնչույթաբանության հիմնադիրը հայ լեզվաբանության մեջ:**

Բանալի բառեր – հնչույթ, հնչյուն, հնչուրդ, եռանդան հնչաբանական հայեցակարգ, հնչույթի տեսության հոլովույթ

ВАРДАН ПЕТРОСЯН – *Эволюция теории фонемы в трудах Э. Агаяна*. – Фонологические взгляды Э. Агаяна формировались в течение сорока лет – от «Курса общей лингвистики» (1947) до «Основ языкознания» (1987). В этот период в трудах учёного намечаются три подхода к определению фонемы: 1) коммуникативный, или социальный, 2) гносеологический, физический, 3) смысловозначительный, абстрактный. Для третьего подхода характерно, что фонема определяется как «абстрактная единица структуры языка», а кроме фонемы и звука, вводится понятие фона. В основе трёхчленной системы фонематических единиц лежит новая концепция восприятия языка и речи. Согласно ей различаются общественная речь и индивидуальный язык.

Э. Агаян не только обогатил учение о фонеме, но и предложил новую модель

³² Н. С. Трубецкой, նշվ. աշխ., էջ 81:

³³ Հմմտ.՝ **Գ. Բ. Ջահուկյան**, Ընդհանուր և հայ հնչույթաբանության մի քանի հարցեր // **Ուույնի**՝ Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 7-25:

³⁴ Տես **է. Բ. Աղայան**, Գրաբարի քերականություն. Հնչյունաբանություն:

фонологического дистрибутивного анализа, а после исследования фонологической системы грабара («Грамматика древнеармянского языка: фонетика». Ер., 1964) стал в армянском языкознании основоположником фонологии.

Ключевые слова: *фонема, звук, фон, трёхчленная фонематическая концепция, эволюция теории фонемы*

VARDAN PETROSYAN – *The Evolution of the Phoneme Theory in E. Aghayan's Works.* – Aghayan's phonemic viewpoints were formed for 40 years en route from the publications of his works – “Course on General Linguistics” (1947) until “Basics of Linguistics” (1987). During this period his ideas were formed and concentrated mostly on the qualitative changes of phonemes, rather than its elaboration and enrichment. Three main disciplines on phonemes are outlined in the eminent author's works of this period: **1) communicative or social, 2) epistemological-physical, 3) sense isolating-abstract.** For the third stage it is important that: **a.** as opposed to the first two stages, where the phoneme is considered a substantial unit, this stage defines it as “an abstract unit of linguistic construction,” **b.** besides phoneme and sound, an idea of a third unit – the context-phone (hnhchurd) – is introduced as the representative of the first two in the speech plan.

In the basis of the proposing of the three component system of phonemic units is the new discipline of the perception of language and speech. According to it, the speech is not only an individual plan, but also a social one, i.e. one can distinguish the **public speech** that has its parallel definition in others' works (E. Coseriu, G. Jahukyan) as **individual speech.**

Professor E. Aghayan not only did enrich the study of phoneme with new ideas basing on the principles of pragmatic phonemics, but he also suggested a new model of phonemic distributive analysis. Through a profound study of the phonemic system of Grabar (Grammar of Grabar: Phonetics, Yerevan, 1964), he became the founder of Phonemics in Armenian linguistics.

Key words – *phoneme, sound, phone, trinomial phonemic conception, evolution of the phoneme*